

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

### ԵՕԹԸ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐ՝ ԲԺ. ՆԱԶԱՐԷԹ ՏԱՂԱԻԱՐԵԱՆԷՆ ՄԿՐՏԻՉ ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆԻՆ (1908-1909)

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ

Հետագայ էջերով հրատարակութեան կու. տանք Մեծ Եղեռնի նահատակ մտաւորականներէն բժ. Նազարէթ Տաղաւարեանի՝ Սիւրբ Անդրանիկեանին ուղղած անսխալ նամակներու փունջ մը: Անոնք անկասկած պիտի նպաստեն օսմանեան սահմանազրուեցեան վերահաստատման յաջողոյց շրջանին ղէպօրը, Հոգեբանութիւնը, մասնութիւններն ու իրաջիւրեակը աւելի լու. հասկնալու եւ բժրոճելու: Նամակները կարեւոր են նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) պատմութեան, սկզբնական շրջանի գործունէութեան եւ նոր մասնաճիւղերու՝ հիմնադրութեան, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան, վերահաստատուած օսմանեան սահմանազրուեցեան եւ կատարուելիք երեսփոխանական ընտրութիւններուն, Սերաստիոյ տրամադրուելիք նպատակն, եւ ազգային ու անձնական զանազան այլ հարցեր ուսումնասիրելու տեսակէտէն:

1915ի Մեծ Եղեռնի զոհերէն, բանասէր, հրապարակախօս, ազգային-մշակութային գործիչ, խմբագիր, մանրէաբան, հարտարագէտ-երկրագործ եւ բժիշկ Նազարէթ Տաղաւարեան-Չատրըքեան ծնած է Սերաստիոյ 26 Դեկտեմբեր 1882ին: Ուսումը ստացած է Պոլիս, իսկ Փարիզի մէջ կատարելագործած է զայն՝ վկայուելով որպէս զիւլաւանսի: 1883ին մեկնած է Պոլիս, ապա վերադարձած ծննդավայրը՝ ստանձնելու տեղւոյն ազգային վարժարաններուն տնօրէնութիւնը (1886-1888), թեոյ կրկին անցած է Պոլիս՝ վարելու համար Արամեան վարժարանի տնօրէնութիւնը: 1887ին մեկնած է Գաւիթ, ապա՝ Փարիզ եւ հետեւած Սորբոնի Համալսարանի բնագիտութեան եւ բժշկութեան դասընթացքներուն: Պոլիս վերադառնալով, եշանակուած է Սուրբ Փրկիչ Ազգային Հիւանդանոցի բժշկագետ: Երկու անգամ ձերբակալուելով քաղաքակրօնական եւ համրտեան ուժեղի օրերուն (1896 եւ 1900), 1905ին մեկնած է Գաւիթ եւ մասնակցած ՀԲԸՄի հիմնադրման աշխատանքներուն (1906), զառնալով անոր առաջին կեդրոնական Վարչութեան անդամներէն մէկը: Օսմանեան սահմանազրուեցեան ետք վերադարձած է Պոլիս եւ ընտրուած օսմանեան երեսփոխանական ժողովի անդամ՝ իբրեւ Սերաստիոյ ներկայացուցիչ, միաժամանակ մաս կազմելով օսմանահայ համայնքի Ազգային կեդրոնական Վարչութեան Բաղադրական Ժողովին: Տաղաւարեան մեծ աշխատանք

տարած է պոլամերն շրջաններու, հայկական գաւառներու եւ Կիլիկիոյ մէջ  
ՀԲԸՄի մասնաճիւղեր հիմնելու ուղղութեամբ: Երկու անգամ ուղևորուած է  
Կովկաս, առաջինը՝ 1908ին, իբրեւ կաթողիկոսական ընտրութեանց պատուիրակ,  
իսկ երկրորդը 1914ին՝ ՀԲԸՄի մասնաճիւղեր հիմնելու յատուկ առաքելութեամբ:

Մեծ Եղեռնի օրերուն, երբ Բրաքական կառավարութիւնը Տիարպեղիի պատե-  
րազմական աստանին առջեւ դատելու պատրուակով Հեռացուցած է զինք Պո-  
սէն, արտօրի ճանապարհին կրցած է ապահովել ՀԲԸՄի Երազիւր-կանոնադրին  
Բրքերէն Թարգմանութեան օրինակ մը, այն յոյսով, որ անով կը յախքի համոզել  
աստանը, որ իր պատկանած միութիւնը քաղաքական գործունէութիւն չունի եւ  
զուտ մարզապարական կազմակերպութիւն մըն է...

Հիմնած ու խմբադրած է հայերէն առաջին բնագիտական Հանդէսը՝ Գիտա-  
փան Եւրոսուսը (Պոլիս, 1886-1887):

Հրատարակած է պատմագիտական, բանասիրական եւ բժշկագիտական մաս  
երկու տասնեակ զէրքեր: Գիտական-բնագիտական իր Հրատարակութիւնները ի-  
րենց տեսակին մէջ առաջիններէն էին հայ իրականութեան մէջ: Անտիպ ձգած է  
նաեւ Կենդանաբուժութիւն զէրքին տասը հատորները: Հայերէնի կողքին գրած է  
նաեւ Բրքերէնով եւ Փրանսերէնով:

Միջոխը Անդրանիկեան ծնած է Պոլսոյ Ենի Գարու Թաղը 1861ին: Եղած է  
ՀԲԸՄի հիմնադիրներէն ու անոր անդրանիկ կեդրոնական Վարչական Ժողովի  
անդամներէն՝ գանձապետի պաշտօնով: Աւելի ետք քանի մը անգամ վերընտ-  
րուած է նոյն պաշտօնին: Եղած է անգամ Գա՛հրէ՛ի Հայոց Գաւառական Ժողո-  
վին ու Կալուստոց Հոգաբարձութեան, ինչպէս նաեւ՝ անգամ Գալուստեան Ազ-  
գային Վարժարանի Հոգաբարձութեան: Անդամակցած է նաեւ Դամկազար Կու-  
սակցութեան: Մեծ կարուանատէր էր ու կը գրադէր բամբակի մշակութեամբ:  
Երջան մը եղած է ՀԲԸՄի նախագահ Պողոս Նուպար փաշայի կարուաններուն  
սեսուլը: Աշխատակցած է հայ մամուլին ու Հրատարակած երկու գրքերի: Մահա-  
ցած է Գա՛հրէ՛, 1930ին:

Հրատարակուող նամակներէն կը պարզուի, որ Անդրանիկեան եւ Տաղաւար-  
եան սերս մտերիմներ ու գործակիցներ եղած են, մանաւանդ որ երկուքն ալ մաս  
կազմած են ՀԲԸՄի հիմնադիրներու խմբակին: Հաւանաբար անոնց իրարու ծա-  
նոթացած ու մտերմացած ըլլան Տաղաւարեանի Գա՛հրէ՛ կեցութեան տարիներուն,  
մտերմութիւն՝ որ շարունակուած ըլլալու է մինչեւ Մեծ Եղեռն՝ Տաղաւար-  
եանի ողբերգական նահատակութիւնը: Անուշտ իրենց նամակազրութիւնը չի  
սպառիր այստեղ Հրատարակուածով: Անոնց այլ նամակներ ալ կրնան փոխանա-  
կած ըլլալ, որոնք մեզի անծանօթ կը մնան: Անծանօթ կը մնայ նաեւ Անդրանիկ-  
եանի՝ Տաղաւարեանին ուղղած նամակներուն ճակատագիրը: Իրենց մտերմու-  
թեան մէկ զրոսեւորումն է նաեւ այն, որ անոնց 1910ի կէսերուն միասնաբար  
չըջած են պոլամերն հայաբնակ շրջանները՝ Պարտիզակ, Նիկոմիդիա եւ Ատա-  
բազար, ՀԲԸՄի մասնաճիւղեր հիմնելու նպատակով:

Հրատարակուող նամակներուն բնագիրերը կը պահուին մեր մօտ: Տարիներ  
առաջ, այլ վաւերաթուղթերու հետ, գանձեց նուէր ստացած ենք Հայազգի Փրան-  
չիական հայազէտ Հ. Վենես-Մանսուր Մուսթրի՛նէն: Արժ, առիթէն օգտուե-

յով, չնորակալուփիւն կը շատենց իրեն:

Անգրանիկեանի արխիւը մեն ժամով 1982ին Գահրէէն փոխադրուած է Երեւան՝ Հայաստանի Պատմութեան կենտրոնական Պետական Արխիւ, ուր կը պահուի այժմ՝: Մեր արամադրութեան տակ գտնուած այս նմուշները ըստ երեւոյթիս գուրս մնացած են այդ հաւաքածոյին եւ օրին չեն ուղարկուած Հայաստան:

Նամակները հրատարակութեան կու տանք նոյնութեամբ, առանց որեւէ միջամտութեան:

Ա.

Ի Կ. Պոլիս, 9 Հոկտ. 1908

Ազնուաշուք  
Տիար Մ. Անդրանիկեան  
ի Աննտիվ՝

Գերագմի քարեկամս,

Սեմ հաճոյք պատճառեց ինձ Սեպ. 29ի գիրդ: Քանիցս Չեզ գրելու պէտքին մէջ գտնուեցայ, սակայն հասցենիդ չգիտէի:

Արդարեւ Ձուիցերիս գալու մտօք պատրաստուած էիմք, սակայն ապա Թուրքիոյ ազատագրութեան լուրն փոխեց մեր ծրագիրն՝<sup>1</sup> եւ գոնէ ինչքերնիս ազատելու նպատակաւ հոս եկանք: Մեր ինչքերն պահուած տեղէն գողցուած ու ծախուած էր, ուստի բան չգտանք, եւ այժմ առ այդ դատարանի դիմած ենք: Չեմ կարծեր որ ձեռքերնիս բան մ'անցնի:

Աստ հասնելուս տիրող Ազգ. գործունէութեան հոսանքն զիս ալ սկսաւ քշել: Պատրիարքարանին կողմանէ մինչ Տարտամնե՛ր Իզմիրլեանի՝ ընդ յառաջ գացի, ու ապա Իզմիրլեան Սրբազանի կողմանէ իշխան Սապահետտինի՝<sup>6</sup> գացի միւսնոյն պաշտօնով՝:

Նախ Սեբաստիայէն եւ ապա Թոքատէն զիս կարողիկոսական ընտրութեանց պատուիրակ կարգեցին՝<sup>8</sup> որով երկու ձայն ունիմ, եթէ երկուքէ աւելի ձայն ունենալ ներելի ըլլար՝ պիտի կրնայի շատեր ունենալ. աւելին մերժեցի՝<sup>9</sup>:

Սեբաստիոյ եւ Էրզրումի կողմանէ Ազգ. Երեսփոխանական ընդհանուր Ժողովոյ երեսփոխան ընտրուեցայ, առաջինն ընդունեցի, երկրորդն մերժեցի, զի մէկէ աւելի վիճակ ներկայացնել ներելի չէ:

Այժմ սեբաստացիք կ'աշխատին զիս *ՄՃկոսի Մշարտանի*<sup>10</sup> երեսփոխան ընտրել: Եթէ իրենց այս ձեռնարկն յաջողի, աստ կը մնամ, ապա քէ ոչ Գահիրէ կու գամ (եւ) զվիսաւորաբար Հ.Բ.Շ.Միութեան համար աշխատելու համար:

Ինձ առաջարկուեցաւ Ազգ. Հիւանդանոցի՝<sup>11</sup> տնօրէն եւ քժշկապետ ըլլալ միանգամայն 30 ոսկի ամսականաւ, մերժեցի, Գահիրէ գալու մտօք:

Եւ «Լուսաբեր»<sup>12</sup> չեմ ընդունիր սակայն տեղեակ եմ անդ տեղի ունեցած միջինկին եւ արդիւնքին, չեմ կարծեր որ փաշան<sup>13</sup> այդպիսի տղայական առա-

ջարկ մը ընդունի, այդ առաջարկն ընկերութիւնն<sup>14</sup> քաղել կը նշանակէ: Մեզմէ<sup>15</sup> միայն Աղաթօնն<sup>16</sup> հոն է<sup>17</sup>, կը վախճան որ զայն կը համոզեն, իցի՛ր թէ դուք փաշային գրէիք եւ քիչ օրէն դառնայիք: Այս խնդրոյ մասին այստեղ ալ շատերու հետ զէշ մարդ եղայ, սակից Գահիրէի հետ բոթակցողներ կան:

-Տեղոյս քոլոր մեծամեծներն համակիր են մեր միութեան, մասնաճիւղ մը կազմելու համար քանիցս խնդրեցի Աղաթօնէն որպէսզի փաշային ստորագրութեամբ ինձ պաշտօնակամ նամակ մը դրկուի այս մասին եւ մէկ հաստ ալ Նորատունկեանին<sup>18</sup> որպէսզի անոր մախազահութեան տակ տեղի ունենայ մասնաճիւղն, սակայն քան մը չ'եկաւ իբր թէ՛ փաշան ժամանակը չ'է ըսած է: Երբ անցեալ տարի Աղաթօն պէյ Անգլիա գնաց՝ անոր այսպիսի գրեր հասցուցի որ իշխանի պէս ընդունուեցաւ<sup>19</sup>, դժբաղդաբար ես ձեռիս գիր մը շումիւ... ու Իզմիրեան Մրրազան շատ համակիր է մեր միութեան՝ եթէ կարելի ըլլայ երբեք նամակ դրկել տալ աստ՝ մին ինձ, մին Նորատունկեանին եւ երրորդն Իզմիրեանին, եւ վստահ կրնար ըլլալ որ կարելոր մասնաճիւղ մը կը հաստատուի աստ<sup>20</sup>:

-Քիչ օրէն Կովկաս պիտի երթամ. լաւ է որ ունենամ հետս մի պաշտօնակամ նամակ, առանց այդպիսի մի գրութեան քան չեմ կրնար ընել, ուստի կը խնդրեմ այս մասին ջանքեր ըրէ: Եթէ կը հաճիք գրեցէք Աղաթօն պէյին որ Չեզ դրկէ իրեն համար գրած յանձնարարագրին օրինակն, եւ նամակի պաշտօնակամ բոթեր, եւ դուք գրեցէք յարմար նամակներ, փաշային ստորագրել տուէք եւ ինձ հասցուցէք, որով թէ աստ եւ թէ ՚ի Կովկաս մասնաճիւղեր կրնանք ունենալ:

-Չեր գաղափարն շատ լաւ է, ազգն առաջնորդող «Ազգ. Խորհուրդ» մը օգտակար կրնայ ըլլալ, սակայն կուսակցականք պիտի օւզեն մէջ մտնել եւ չկրնար յաջողի դժբաղդաբար:

-Մենք ամենքս լաւ ենք աստ: Մինչ Ռուսաստանէ դարձս ընտանիքս աստ պիտի մնայ եւ յետ այնու պիտի որոշուի աստ մնալնիս կամ դառնալնիս: Եթէ *Մէլաթ* չ'ընտրուիմ կը դառնամ, գոնէ քիչ ժամանակուան համար:

-Հաճեցէք խնդրեմ ընդունիլ իմ եւ կնոջս յարգանքներն եւ բարեւներն եւ մատուցէք զայն Չեր ազնիւ կողակցին: Միշտ Չերոյ

Տօք. Ն. Տաղատարեան

Բ.

Դ Կ. Պոլիս 10 Հուլ. 1908

Գերագնի բարեկամս,

Նամակս կընթած ու թղթատարութեան յանձնելու վրայ էի եւ ահա լուր մը ու գիր մը հասնելով հարկադրուեցայ այսօրուան թողուլ, ու գրել նաեւ Չեզ ներկայ յաւերածն:

-Լուրն է կաթողիկոսական ընտրութեան պաշտօն ունեցող պատուիրակներու հրապիրագրելու ժամանումն, ուստի քիչ օրէն ճամբայ պիտի ելնեմք: Խնդրեմ առսահայոց ուղղեալ պաշտօնակամ գիր մը հասցուցէք ինձ ՚ի ստորեւ Չեզ ցոյց տուած հասցէիս, եթէ հոս չգտնուիմ իսկ ինձ կը դրկուի: Հ.Բ.Ը.Միութեան մասնաճիւղի գործն վերադարձիս կը մնայ, յուսամ թէ մինչեւ այն առեմ

ուզած երեք նամակներս պատրաստած ու ինձ դրկած կ'ըլլար աստ:

-Մինաս Չերազ<sup>21</sup> հոս է, սակայն դեռ պաշտօնական քղերը ասած չէ եզիպտոսէն իր պատուիրակութեան համար<sup>22</sup>, եւ հաւանականաբար միայն Աղեքսանդրիոյ երեսփոխանք պիտի ստորագրեն՝ քանի որ Գահիրէցիք բացակայ են, եւ իրենց հեռագրական ու գրատու քողոքներն առ ոչինչ համարուեցան:

-Բնագաւառ Մեքսատիան մուրադու վարժուած չէ, ինքն կը հոգայ իր պետրերն եւ քացատիկ պարագայներու մէջ կը դիմէ ալոյց: Մինչեւ ցարդ Մեքսատիոյ համար որեւէ նպաստ դրկուած չէ միութեանս կողմանէ, սակայն ահա քացատիկ պարագայ մը կը հարկադրէ Առաջնորդն<sup>23</sup> դիմել ներփակ գրով մեր քարեգործակամին նպաստին: -Ինչպէս նամակին մէջ ըստած է որքանոցն<sup>24</sup> մինչեւ ցարդ Սր. Սարգիս Թաղի վարժարանին մէջ է եղած, սակայն ինչ ինչ պատճառներով այլեւս անդ մնայն անյարմար դատելով փոխադրած են Ամապատ անուանեալ անբնակ վանքն<sup>25</sup>, որոյ հին շէնքերն եթէ փորո ինչ նորոգուին շատ յարմար կ'ըլլան այս<sup>26</sup> նպատակին, եւ ահա այս շինութեանց ծախսը համար կը դիմեն միութեանս: Արդ կը խնդրեն որ եթէ հմար է այս նպաստին համար զոմէ 40-50 ոսկի յատկացնել տար: Այս խնդրոյ կարգադրութիւնն Չեզ կը յանձնեն: Եթէ կամիք ներփակ նամակին պարունակութիւնն զնոցեք փաշային եւ իր հաճութիւնն ձեռք բերէք, եւ զրէք ինչ որ արժան համարիք:

Ձերմ յարգամօք միշտ ձերդ

Sop. Ն. Տաղաւարեան

Յ.Գ. Ինձ գրած նամակնիդ ուղղեցէք

Post. Restante

Post. Française

Galata

Constantinople

ուր որ ալ ըլլամ ինձ կը հասցնեն:

Յոյն

Գ.

Դ Կ. Պոլիս, 13 Դեկ. 1908

Havir khan No. 22

Galata

Ազնուաշուք

Տիար Մ. Անդրանիկեան

Դ Գահիրէ

Գերագնի քարեկանս,

Վերադարձիս միայն ստացայ Չեր Հոկ. 27 թիւ նամակն: Ընդհակադրութիւն կարողիկոսական ընտրութեան պատուիրակ եւ Ազգ. Երեսփոխանական ժողովոյ անդամ ընտրուելուս համար Չեր Զերմագին շնորհատրակամներուն:

Կար. ընտրութեանց մասին աւելորդ կը համարիմ գրել զի լրագրերէ լիակատար տեղեկութիւններ առած ըլլալու էք: Ի՛նչ Տփղիս եւ յէջմիածին բազմիցս առիծի պէս կոտեցայ, եւ վերջապէս յաջողեցանք ազգին երկու սիրելիներն *բանդիթա*<sup>27</sup> ներկայացնել<sup>28</sup>, յուսամ թէ՛ Չարն Իզմիրեանն կը վաւերացնէ, փոխարքայն առ այդ պիտի աշխատի<sup>29</sup>:

-Մամրոդութիւնս 40 օր տեսց զոյ 20 անլացիմ օրերս կար. ընտրութեան հարցին նուիրեալ էին, իսկ միւս 20 օրերն Հ.Բ.Ը.Միութեան: Այո՛ այդ ընկերութեան համար Պարոմի, Տփղիսի, Երեսնի, Աղեքսանդրաքոյի, Պարոյի եւ Նոր Նախիջեանի մէջ մեծ *բոօրականդ* ըրի, յաջողեցայ Տփղիսի, Պարոյի եւ Նոր Նախիջեանի մէջ մասնաճիւղեր կազմել<sup>30</sup>, եթէ լաւ աշխատուի Տփղիսն ու Պարուն կրնայ մեզի 10 000 ոսկի տալ: Այդ երկու քաղաքաց միլիոնատերներն շատ համակրեցան եւ յամենարարեցին ինձ իրենց շնորհակալիքն ու համակրութիւնն յայտնել վսեմ Պօղոս փաշային որ իրենց խորհածն մա իրագործած է, եւն.: Արդարեւ առատ ոսկի կայ այն կողմերն, սակայն հարկ է քրթակցիլ եւ շարունակ յարարելութիւն մշակել: Ես կը խորհիլ կողմդ հասնելուս անմիջապէս գործի սկսիլ եւ փաշային ստորագրութեամբ նամակներ գրել, սակայն իբր *Մարտոս* աստ մնալու հարկադրուած ըլլալով չ'զհտեմ ինչպէս ընել: Կը խորհիմ քանի մ'օրէն մի քանի նամակաց պատճեններ դրկել ձեզ՝ խնդրելով որ զանոնք փաշային կարդալէ ետք մաքրութի առնել տար եւ պէտք եղած տեղերն դրկէք: Առ այժմ յամուսնս զբաղեալ եմ:

-Կ. Պոլսոյ մէջ ալ Հ.Բ.Ը.Միութեան մասին աշխատեցայ, շատ համակիրներ ճարեցի, որոց զվստարն է Իզմիրեան սրբազան, սակայն խոհեմութիւն չէ առայժմ գործի ձեռնարկել, զի Կ. Պոլսոյ հայերն շատ ծանրաբեռնեալ են գաղթականներու առթած թեւե՛ն<sup>31</sup>: Այս տաղտուկներու անցնելէ ետք յուսամ թէ հոս ալ յաջողութիւն կ'ունենամք<sup>32</sup>:

-Միութեան թշնամիներն այստեղ ալ քաներ մը գրեցին, սակայն ես հրապարակաւ պատասխանելն աւելորդ համարելով պէտք եղած տեղերն անոնց սեւ ծրագիրն յայտնած եմ, ուրախ եմ որ դուք ալ այդ տեղ պէտք եղածն ըրած էք:

Չեզ շատ քարեկամ ձեւացող մի քանիներ լաւ է փոքր ինչ զգուշանալ:

-Խորհրդարանն գոցուելուն կը խորհիմ կողմդ գալ, թէ իմ անձնական գործերն կարգադրել, եւ թէ Չեզ հետ միութեան գործոյն մղում մը տալ: Մի յուսահատիք՝ միութիւնն ապագայ ունի, հարկ է փոքր ինչ տուկալ եւ աշխատիլ:

-Մերաստիոյ իլամիսը զուտ գումարնուդ մասին շնորհակալութիւն:

-Հինգ օր առաջ Օտէսայի ճամբով դարձիս՝ տեղեկացայ *Մարտոս* ընտրուիս, ուստի փոխան կողմդ գալու, աստ մնալ ստիպուեցայ: Այս հինգշաբթի խորհրդարանն կը քացուի, ու զիս ցկեանս քերտարգելութեան դատապարտողին հետ դէմ առ դէմ պիտի գտնուիմ:

-Խորհրդարանին մէջ ընդամենն 9 հայ կայ<sup>33</sup>. Իցի՛ւ թէ օգտակար կրնայինք ըլլալ երկրին եւ ազգին: Սապահետտիկը իր ողջամիտ գաղափարներուն համար չ'ընտրուեցաւ: Թորքերն շատ հեռի են դեռ քաղաքական խնդիրներն լաւ հասկնալ:

-Հաճեցէք խնդրեմ Կսեմ. փաշային մատուցանել իմ յարգանքներս, եւ ըստ որ կը խնդրեմ իր պաշտպանութիւնն տարածել միշտ իմ վրաս: Միշտ պիտի աշխատեմ օգտակար ըլլալ Հ.Բ.Ը.Միութեան: Հաճեցէք եւ դուք ընդունիլ իմ յար-

զանքներն ու բարեւներն եւ հաղորդել զայն Չեր ազնիւ տիկնոջ: Չերոյ  
Sop. Ն. Տաղատարեան

Յ.Գ. Ներփակ Չեզ կը յղեն Ստյ կաթողիկոսարանն եկած երկու թղթեր Հ.  
Բ.Ը.Միութեան ուղղեալ:

7.

Ի Կ. Պոլիս 15 Դեկ. 1908  
Haviar khan No. 22  
Galata

Ազնուաշուք  
Տիար Մ. Անդրանիկեան  
ի Գահիրէ.

Գերազնիւ բարեկամ,

Կը հաստատեն երկու օրեր առաջ Չեզ ուղղած գիրս, յորում եւ շնորհակա-  
լութիւն կը յայտնէի Սեբաստիոյ որբանոցին որկած նպաստնուդ մասին՝ զոր  
ինն ծանուցած էր միութեան գրագիր Պ. Մարտիրոս Պապայէկեանն: Ընդունած  
տեղեկութեանցս վրայ գրեցի եւ Սեբաստիա, սակայն այսօր կրկին Մ. Պապա-  
յէկեանն ընդունած մի գրութենէս կը տեղեկանամ թէ Սեբաստիոյ յատկացեալ  
գումարն այլորդ որկուած է... զարմացայ եւ արժան համարեցի ներկայիս  
խնդրել Չեզ որ երէ հնար է գտնէ 40 եզ. ոսկոյ նպաստ մը հասցնէր ի Սեբաստ-  
իա, զի Չեր ու Աղաթօն պէշի ներշնչած յոյսերուն վրայ խորհուրդ տուի իրենց  
պահպանել որբանոցն Եզիպտոսէ նպաստի մը խոստումով... Կը սիրեն յուսալ  
որ ընդ փոյր կը կատարէր Սեբաստացոց այս կարեւոր խնդիրքն:

Ձերմիւ ողջունելով զՉեզ եւ Չեր Ազնիւ տիկնոն կամ եւ մնամ յարգանքօք  
Չերոյ

Sop. Ն. Տաղատարեան

8.

Ի Կ. Պոլիս 9/22 Յունուար 1909  
Haviar-Han No. 22  
Galata  
Constantinople

Ազնուաշուք  
Տիար Մ. Անդրանիկեան  
ի Գահիրէ

Գերազնիւ բարեկամս,  
Համզօստ ճամբորդութենէ մը ետք՝ այսօր առաւօտեան աստ ժամանցի:

Եզիպտոսի հիւրնկալ ափունքներն այսպէս բաժնուելուս առօրէ՛ պարտ կը համարին ջերմապէս շնորհակալութիւն յայտնել Չեզ, ինչպէս նաեւ նախնայ պանդխտութեան ժամանակամիջոցին ինձ հանդէպ միշտ բարեացակամ եւ միշտ ազնի գտնուած ըլլալնու համար: Չեր ծառայութիւններն ու յիշատակն չպիտի մոռնամ եւ ըստ խոստմանս պարբերաբար պիտի գրեմ Չեզ:

Հաճեցէք խնդրեմ ինձ ժամանուս ծանուցանել եւ ջերմագին յարգանքներս մատուցանել Վան. Պողոս փաշայ Նուպարի եւ իրեններուն:

Այսօր Իզմիրեան սրբազանին պիտի յանձնեմ 70 000 Ֆռ.ի շէքն, եւ որ անշուշտ ընդհուպ ստացումն պիտի ծանուցանէ Նորին Վանութեան<sup>34</sup>: Բաշխման ցուցակն պատրաստելէ ետք պիտի հաղորդեմ միտքեանդ:

Քաղցր է ինձ յուսալ թէ՛ ըստ ձեր խոստման գիրս ընդունելնուդ արդէն ճամբայ հանած էք Սեբաստիոյ որբանոցի նպաստն: Սեբաստիա եւ Բոզմիկ<sup>35</sup> որկուելիք նպաստներու միջնորդ կրնամ ըլլալ:

Հաճեցէք խնդրեմ մատուցանել ինձ յարգանքներս Չեր գերագնի տիկնոջ: Ընդունեցէք եւ դուք, ազնի բարեկամս, ինձ ջերմագին բարեւներս:

Միշտ ձերդ յարգանքօք  
Տօք. Ն. Տաղատարեան

Ջ.

Ի Կ.Պոլիս, 28/11 Մայիս, 1909  
Rue Taksim No. 33  
Péra

Ազնուաշուք  
Տիար Մկրտիչ Անդրանիկեան  
Ի Գահիրէ

Գերագնի բարեկամ,

Այսօր ձեռքս անցաւ «Արշալոյս»<sup>36</sup> 28/10 Ապրիլի թիւն, յորում տեղուդ Ազգ. յորեւրում բաժնոյն մէջ ուրախութեամբ կարդացի թէ՛ երեսփոխանական ժողովն յունկայս շնորհակալութիւն յայտնած է Չեզ, իբրեւ կալուածոց վերատեսուչ: Չեր պաշտօնավարութեան մէջ օգտակարապէս եւ խղճի մտօք Ազգին ծառայելնուդ համար:

Շատ գոհ մնացի եւ եւ անշուշտ Չեր ու ճշմարտութեան քոյր բարեկամներն իրողութիւնն այսպէս երեսան ելնելուն, ու Չեր նախանձորդ չարամիտներուն այսպէս խայտառակուելուն համար:

-Կը ցաւիմ որ Հ.Բ.Ը.Միութիւնն չունի իւր վաղեմի փայլն: Աստ կարեւոր մասնաճիւղ մը կազմելու համար ինձ քանիցս խոստումներ ըրած են Վեհափառ Հայրապետն<sup>37</sup> եւ Վան. Նորատունկեան ԷՖէնտին, ցաւալի է որ դժբաղդութիւնք իրարու յաջորդեցին եւ անա Կիլիկիոյ ջարդի խնդիրն վրայ հասաւ այնպէս որ հայրապետին մեկնումն առաջ չպիտի կարողանանք այդ կարեւոր ճեմարկն ընել:

Կառկասիա եւ Ռուսիա գտնուած միջոցիս Հ.Բ.Ը.Միութեան մասին ըրած

քարոզչություններս շատ լաւ ընդունելութիւն գտան ու երեք տեղեր ալ մասնաճիւղերու կազմութեան մախապատրաստութիւնը եղան, ու վերջին անգամ կողմը գտնուելուս առ այս մասնատր նամակներ գրուեցան, սակայն կ'իմանամ թէ՛ այդ աշխատութիւններ գործնական հետեւանք ունեցած չեն, այդ մասին կը խնդրեմ որ հաճիք ինձ տեղեկութիւններ տալ:

-Տեղական գործերու մասին չափտի գրեմ, լրագրերէ տեղեկացած էք Մարտ 31/13 Ապրիլի *րեսպոնտէն*ական<sup>38</sup> շարժումներն, այդ հետեւանօք մեր անցուցած ճգնաժամներն, եւ իբր արձագանք կ'իլիկիոյ յուզումներն եւն: Փոքրդիկն դեռ անբողջութեամբ անցած չէ: Եթէ Ատանայի խնդրոյն մասին<sup>39</sup> արդարադատ չ'ըլլան՝ այլեւս յոյս չունիմ այս երկրէն: Թուրքիան օր ըստ օրէ միջապէս կ'իյնայ, ու եթէ իրաց այս վիճակն երկար շարունակուի՝ օտար միջամտութիւնը տեղի պիտի ունենան:

Այսու ամենայնիւ այս ամառ աստ գալու մտադրութիւննիդ կրնաք իրագործել: Կ.Պոլսոյ մէջ այլեւս որեւէ դէպք չեմ կարծեր որ տեղի ունենայ, գաւառաց մասին անկարող եմ նոյնն ըսել:

Հաճեցէք խնդրեմ իմ խորին յարգանքներն մատուցանել Նորին Վանմութիւն Պօղոս փաշայ Նուպարի եւ իր պարագայից:

Աղաթօն պէյ[իմ] գրած վերջին նամակիս պատասխանն ընդունած չեմ: Նա եւս իր աստ գալու ծրագիրն կրնայ իրագործել:

Մուշեղ Եպիսկոպոսն<sup>40</sup> եթէ դեռ կողմը է վստահ թող ըլլայ թէ անտարբեր չեմք Ատանայի կոտորածին մասին: Մեր աշխատութիւնը տեղի լրագրաց մէջ չգրուած տեսակէն են:

Ձերմիւ ու յարգանօք ողջունելով զՉեզ եւ Չեր ազնիւ տիկիմն, եմ եւ մնա՞մ յարգանօք Չերդ

Տօք. Ն. Տաղատրեան

Յ.Գ.- Կ'իմն կը յանձնարարէ իր յարգանքներն եւ բարեւներն հաղորդել Չեզ եւ Չեր ազնիւ տիկնոջ: նոյն

է

Կ. Պոլիս, 2/15 Յունիս 1909  
Rue Taxim No. 33 (Pera)

Ազնուաշուք  
Մկրտիչ էֆ. Անդրանիկեան  
Ի Գահիրէ

Ազնիւ բարեկամս

Պատիւն ունեցայ ստանալ Չեր Մայիս 26ի նամակն: Միութեան մասին Չեր տուած տեղեկութիւններէն զոն մնացի: Կանոնագրութեանց սրբագրեալ օրինակէն ինձ բաւական թուօք դրկուիմ կը խնդրեմ: Մի կարծէք թէ Կ.Պոլսեցիներն

անտարբեր են միտքնան մասին, ո՛չ, շատ համակիրներ կան, որոնց հետ միշտ խորհեցանք յուզումներուն համդարտելուն գործի ձեռնարկելու համար. նախ գաղթականներն կային որք ժողովրդեան վրայ մեծ բեռ մ'էին, երբ անոնք սկսան նուազիլ և Իզմիրեան ու Նորատունկեան կը խորհէին մեծ ժողով մը կազմել, ահա Ատանայի խնդիրն վրայ հասաւ ու ամէն ինչ մտայնել տուաւ. սակայն երբ այս յուզումներն անցնին՝ կրկին խնդիրն ձեռք կ'առնեն, ցաւալի է միայն որ չպիտի կրնանք վայելել Իզմիրեանի նախագահութիւնն. գուցէ ի հետուստ նամակով մասնակցի մեզ:

Կովկասի և Ռուսիոյ համար մեր գործի յաջողութեան վնասողներն *փրկիչներն* եղած են, և հիմա ալ անդ տիրող խստութիւններն<sup>41</sup> մեծապէս կը դժուարացնեն գործն, գուցէ ապագային կարելի ըլլայ և նոյն իսկ Հայրապետի խրատը խոյսով:

«Տեղ» տեղի ունեցած կրկին հանգանակութեանց մասին *Չեր* ջանքերն գովելի են: Պետքն այնչափ մեծ է որ մարդ կը յուսահատի: Չեմ յուսար թէ այլևս ջարդեր ու վայրագութիւններ կրնան տեղի ունենալ. եղածն ժողովրդեան յուսահատութիւն պատճառած է ու ժողովուրդն սկսած է գաղթել. եթէ այսպէս շարունակուի՝ երկիրն պիտի ամայանայ և օտարներ պիտի օգտուին ապագայ բարեփոխութիւններէն: Մեծ մասն ղեպ Ամերիկա կ'երթան:

«Մուշեղ Եպիսկոպոսն յուր չումիմ, ի՞նչ կ'ընէ, ի՞նչ ընել կը խորհի: Էգճասի դատին արդիւնքին տեղեակ եմ, և այդ մասին արդէն գրած ու շնորհատրած եմ զՉեզ»<sup>42</sup>:

Այս տարուայ սկիզբներն Եգիպտոսն բողոս՝ ջրի ընկերութենէն խնդրեցի որ իմ պաշտօնիս համար՝ ինձ *բօնօժ*<sup>43</sup> տան. ընդունեցին ու վեց ամսուան *բօնօժ* տուին. ահաւասիկ այս ամսոյ վերջն *բօնօժ*ս կը լրանայ, սակայն և նկատի առնելով երկրին անկայուն ու յուզումնալից վիճակն, կը վստիման որ գուցէ քիչ ատենէն ստիպուիմ վերադառնալ Եգիպտոս, ուստի և պիտի փափարէի որ *բօնօժ*ս երկարի: Այսօր Սապա փաշային կ'ուղղեմ խնդրագիր մը այս մասին, կը խնդրեմ որ դուք հաճիք յիշեալը տեսնալ և խնդրոյս յաջողութեան մասին քարեխօսել: Եթէ Պօղոս փաշան տեղդ գտնուէր արեւի դիւրին կրնար ըլլալ անոր դիմելով, սակայն քանի որ նա քացակայ է՝ Չեզ կը դիմեմ առ այս:

Բօնօժիս միայն վեց ամիս երկարածգումն քառական է, զի վեց ամիսէն ինչ ըլլալնիս յայտնի կ'ըլլայ:

Անցեալ Կիրակի տիկին Պօղոս փաշան ու Պետրոն տեսայ, հանգիստ ու գոհ եմ. հաւանակամաբար այսօր քաղըմէն գամ: Աղաքօմ պէ՛ն Մեսիմայեմ<sup>44</sup> երկտողիկ մը որկած է խոստանալով ժընեպէ՛ն երկար գրել:

«Մենք քառական լաւ ենք: Զսան օրէ ի վեր աղջնակս (Եգիպտածին Աստղիկն) հիւանդ է, մտահոգ օրեր անցուցիմք, յոսամ վտանգն անցած է:

«Յուսամ թէ դուք ամէնքդ լաւ էք, հաճեցէք իմ յարգանքներս մատուցանել տիկինիմ և քարեմերս Չեր գաւակաց, մասնաւոր քարեմեր տիպարց Մակալեանի<sup>45</sup>, Յովակիմեանի<sup>46</sup>, Ջատեմանի<sup>47</sup>, Մլորերեանի, Աճեմեանի<sup>48</sup> և այլ զիս յիշողաց:

<sup>41</sup> Յարգանք և ջերմ ողջոյններ Չեզ Չերոյ

Տօք. Ն. Տաղաւարեան

ՄԱՆՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Վ. Մ. Գալստեան, «Նոր Նուիրատուութիւններ Սեր Արխիմն», Բաներ Հայաստանի Արխիւների Երևան, թիւ 3 (194), 1993, էջ 246:
- <sup>2</sup> Այս եւ միւս բոլոր ընդգծումները նշանակին են:
- <sup>3</sup> ՌՄԻ Գրիգոր Տիրատուր Գաւիթէն Անդրանիկեանին ուղղուած 15 Անգամերը 1908 թուականի նոյն տարի մէջ, որ կը գտնուի տրամադրութեան տակ, կը հաստատէ թէ՛ «Տաղաւարեան էֆէնտի վերջին պահանջներն առնելու փոխան էր եանադարձագրութեան երազիրը, այնպէս որ Մէնաճըրի ստացած նաւատուները զեղչ յետս դարձնելով Պոլիս մեկնան էր»:
- <sup>4</sup> Կամ Զանաքոյն, Երուզական Թուրքեան Արսեկան Թուրքեանի բաժնոց եւ Մարմարան Եզէնականի կապոց նկարներ:
- <sup>5</sup> Նկատի ունի «Երկաթէ Գաւրիա» յրէշը մինչ արժանացած Մարթէոս Աբր. Իզմիրեանի (Պոլիս, 1845-էջմանին, 1910, Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ 1908-1910), որ Պոլսոյ պատրիարքութեան շրջանին, 1896ին Մուլթան Ապախոյ Համիտ Բ. ի կողմէ աջարուած էր Երուսաղէմ եւ Օսմանեան Մաճանագրութեան Հռչակումէն ետք, 18 Օգոստոսի 1908ին ժողովրդական մեծ զանգերով վերադարձաւ Պոլիս:
- <sup>6</sup> Իշխան Մուսաճէո Մապաճետայն (1877-1948), թուրք թաղապետական գործիչ, Ազատույ Համիտ Բ. ի կարծիքը Երկար տարիներ զտարանդի մնացած է Փարիզ, այդ վերադարձած Պոլիս, ուրիշ աւելի վերջ անցած է Զուլեյքըիտա Սերտ յարտերութիւններ մշակած է Հայ թաղապետական գործիչներու շնորհիւ:
- <sup>7</sup> Թէւոյթի Ամենակ տարեգրքի Գ. տարուայ (1908) հատորին մէջ (Պոլիս, էջ 288) կայ խորանկար մը՝ անուան՝ 20 Օգոստոս 1908ին, «Օսմ. Մաճանագրական Ակումընի կողմէ վարձուած «Ներքէն» շողանակն մէջ, որ կը ներկայացնէ Իշխան Մապաճետայնը զխմուարկու. դացած մաս երկու տասնեակ Հայ մուսուրականներ»:
- <sup>8</sup> Նկատի ունի Խրիստեան Հարիթի վախճանումէն ետք Մր. էջմանեանի մէջ կայացած Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը, ուր Իզմիրեան կաթողիկոս ընտրուեցաւ:
- <sup>9</sup> Կաթողիկոսական ընտրութեան երկրորդ փուլին մերժուած է պատուիրակներուն երկու մասնով մասնակցելու գրութիւնը եւ անոնցմէ խրատանջելուը մասնակցած է մէկ մասին իրաւունքով:
- <sup>10</sup> Արարեթէն փոխառուայ թրքերէն բառ՝ Երեսփոխանական ժողով (մէնլիս-ժողով եւ մէպու-սաւարուած, պատուիրակ, ուղարկուած բառերէն)։ Յայտնի է որ, սերտատացիներու մեծամասիւլ յաջողութեամբ կը պահուի եւ Տաղաւարեան կ'ընտրուի Օսմանեան Երեսփոխանական ժողովի անդամ:
- <sup>11</sup> Նկատի ունի Պոլսոյ Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցը (հիմնուած՝ 1889ին, Յարութիւն Ամիրա Պէզնեանի բարերարութեամբ), որ ցարդ կը շարունակէ իր գործութիւնը:
- <sup>12</sup> Լուսարեւի՝ ազգային, թաղապետական, անտեսական եւ գրական երկրորդայն թիւթ (1904-1908)։ Լոյս տեսած է Գաւիթի Խմբակիւններ՝ Վահան Բուրքեան, Արփիար Արփիարեան եւ ուրիշներ։ Աւելի ետք միանալով տեղւոյն Արեւին՝ Կրատարական էւ Ալուարեւ-Արեւ անուանով:
- <sup>13</sup> Նկատի ունի ազգային գործիչ եւ ՀԲԸՄի գլխավոր հիմնադիր Պաղոս Նուարար փաշան (Պոլիս, 1861-Փարիզ, 1930), որուն կալուածներուն գրասենեակին տեսուչն էր (տաւթիւն-ին տնօրէնը) Մկրտիչ Անդրանիկեան:
- <sup>14</sup> Նկատի ունի ՀԲԸՄը:
- <sup>15</sup> Նկատի ունի ՀԲԸՄի Կեդրոնական Վարչութիւնը:

<sup>20</sup> Եկատի ունի Երևանի Ազաթանը (Պոլիս, 1880-Նիս, 1935)։ Պարսյ մէջ ստանձնած է պետական բազմաթիւ պաշտօններ, բայց Հեռանալով անկէ ազրան է ստանալական կեանք մը Եզիպոսս գտնուած շրջանին, քանի մը տարի իրեն յանձնուած է Պոզոս Լուսաքարի ազարակներուն ձեռնիկ պաշտօնը։ Հարած է Կան, ազգաշին բազմաթիւ պաշտօններ, Երզնէ է ՀԲԸՄի անդրանիկ Կեդրոնական վարչական ժողովի անդամ՝ փոխ ստանալականի պաշտօնով։ Հեղինակած է անկի քան 10 գրքով՝ ՀԲԸՄիութեան եւ զինպատանուսթեան մասին։

<sup>21</sup> Խոսքը կը վերաբերի Գաւիթիին։

<sup>22</sup> Եկատի ունի Գաւրիել Լորատուանկեանը (Պոլիս, 1863-Փարիզ, 1908), որ Փարիզի մէջ Հեռուած է Մարգարիտ եւ ալ վարժարաններու, բարձրագոյն գաղտնաբաններու (1870-1876), վերագտնուելով Պոլիս վարած է պետական բազմաթիւ պատասխանատու պաշտօններ, ընդ որում Կանի՝ Օսմանեան Կարգութեան Հանրաշին Եինուսթեանց եւ Արտաքին Գործոց նախարարի պաշտօնները Երզնէ Ազգաշին Պատուիրակութեան նախագահ եւ ՀԲԸՄի Կեդրոնական վարչական ժողովի փոխ նախագահ։ Հեղինակ է Օսմանեան Կարգութեան ստորագրած գաշտակիրներուն պատեհները պարփակող Փրանսերէն Recueil d'actes internationaux de l'Empire Ottoman քառուստորին։

<sup>23</sup> Ալաթեան Պոլիս 1907ին Մանչեսթըրը Կանկելով կարճ ժամանակ ետք Հիմը կը գնէ ՀԲԸՄի սեղանի մասնակցութիւն։ Անկի ետք մասնակցող մը կը հիմնէ Կան Լեւոնոսի մէջ։

<sup>24</sup> Տաղաւարեան-Անդրանիկեան-Իզմիրեան կառի մասին վկայութիւն մը անի վաւան Մ. Փիւրքեան, որ 15 Յունիս 1909 Յունկիր Պոսթմեկէ Անդրանիկեանի ուղղուած եւ մեր սրամտազրութեան սակ զանուզ նամակի մը մէջ կը գրէ. «Տօգթ. Տաղաւարեան երեք յանձնարարական նամակներ առած է Իզմիրեան սրբազանի ստորագրութեամբ, ուղղուած երկու եղբայրուաններու (որք Նիս Եւրոպի նաւանցիկ մեծագոյն եղբայրականներն են), եւ Մր. Մէլիս Պարտի. որոնց անունները եւ Կազրդած էին Յանձնարարականը ՀԲԸՄիութեանը այդ անձանց նամակներու Կամար է։ Նիս Եւրոպ ուղևորեալս ստանց Լեւ ալ պիտի տեսնուիմ, Տիար Գարակէնդեանի Լեւ խորհրդակցեցով։ Թերեւ Մր. Պարտի ալ բարտարական որ մը տար։

<sup>25</sup> Մինաս Զերազ՝ գրող, Կրտազրակախոս ու խմբագիր (Պոլիս, 1863-Փարիզ, 1930)։ Երկու տարիներ գրողած է ուսուցչութեամբ, վարելով Պոլսոյ Կեդրոնական վարժարանի տնօրէնութեանը (1890-1896)։ Խմբագրած է քանի մը թերթեր Կայրէն եւ Փրանսերէն թղուանդով։ Հեղինակած է Կան, քանի մը գլխեր նախ թղուանդով։ 1878ին որդիս քարտուզոր ընկերակցած է Խրիմեանի պիտուարութեամբ Պերլինի մեծատղով մեկնող Կաշիկան պատուիրակութեան։

<sup>26</sup> Ակնարկութեանը կ'առնուի կաթողիկոսական ընտրութիւններուն որդիս պատուիրակ Զերազի մասնակցութեան Կարգին։

<sup>27</sup> Եկատի ունի Եանեթ Բանասէր ու Կրեանկան գործիչ Թորոզմ Եզո. Գուշակեանը (Պարտիզակ, 1874-Երուսաղէմ, 1930), որ 1907-1913 վարած է Սերասոխոյ սուսխորգութիւնը։ Հարած է Կան, եղբայրական պատասխանատու բազմաթիւ ալ պաշտօններ, իսկ 1901ին ընտրուած է Երուսաղէմի Կայոց պատրիարք։ Ունի բանասիրական բազմաթիւ գործեր, որոնցմէ առանց արժեքաւորն է Սերասոխոյ Մր. Նշան վանքի մեաղայրներուն ցուցկը։

<sup>28</sup> Որբանոցը հիմնուած է 18 Հոկտեմբերի 1888ին՝ «Որբանոցը Ընկերութեան» կողմէ։ Նախ Կառաստուած էր Ս. Սարգիս Թաղի Ներսիսեան վարժարանին մէջ, բայց յետոյ փոխաղրուած է Անուպատ վանքը Գալուսթիւնը շարունակած է մինչև 1915է Մեծ Եզեան Հասցուցած է բազմաթիւ շրջանաւարաններ եւ արժանաւոր սաներ։

<sup>22</sup> Անուպատ Վանք՝ փոքրիկ մեծատուն Անրատայնյ մասերը, զեղի Հրախո Անուպարար անոր կառուցումը կը վերադարձի Ս. Բաղչոս Առաքելային Վանքը ունեցած է ժամ 18 սենեակ, առաջնորդարան եւ նորակառույ շէնք յատկացուած՝ որբանոցին, ուր Յունուար 1909ին կը պատասխարուէին 85 որբեր Վանքը նախապէս ունեցած է առանձին միարանուսիսն եւ թեմեր:

<sup>23</sup> Բնագիրին մէջ բառը կրկնուած է:

<sup>24</sup> Պրանսերէն candidat՝ թեմական:

<sup>25</sup> Նկատի ունի կաթողիկոսական ընտրութեան ժամանակ ընտրուած երկու թեմականները՝ Իգմբրեան եւ Օղիէ Աբր. Դուրեան, որոնցմէ առաջինին ընտրութիւնը անկի ետք վաւերացուեցաւ Բուսնոյ ցարին կողմէ, ըստ պարտէնիէսի տրամադրութեան:

<sup>26</sup> Բուսնական ուշ՝ Յունուար 1909ին, Պոլսոյ ուսումական ղեկավարատան կողմէ Լազարոսեացու Իգմբրեանի ընտրութեան վաւերացումը ցարին կողմէ:

<sup>27</sup> ՀԲԸՄի պատմութեան նուիրուած թեմականներ ՀԲԸՄիսիսեան Արեւաթեայ Եպիսկոպոս, 1908-1921) Ա. Կատար, Փարիզ, 1986) ստուարածաւալ Կատարին մէջ Նշեալ երեք քաղաքներու մասնակիցներուն կազմութեան կամ գործութեան մասին ոչ մէկ ակնարկութիւն կարելի եղաւ գտնել Արեւելուայ շրջաններու մէջ ՀԲԸՄի մասնակիցներու գործութեան մասին վկայութիւններու չննք Լանդիպիլեր Կոնս. Վարդգէս Լամբարտականի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեանը եւ Հայաստանը նորատիպ աշխատութեան մէջ (Սրբեան, 2001), ուր, էջ 77ի վրայ մասնաւոր կը շեշտուի թէ Բուսնոստանի եւ Արեւելեան Հայաստանի մէջ միութեանը մասնակիցը չէ ունեցած:

<sup>28</sup> Ակնարկութիւնը կ'ընթաց սամանեան սամանադրութեան լեռնաւեցոյ ստեղծուած Կամանական ազատութեան միջոցառումի մէջ արտասահմանէն՝ Սեդիկոսեան, Երազայիս եւ մասամբ Կոնս. Ամերիկայի Պոլսոյ Կամոյ յիշատակականներուն, փախստականներուն եւ երթեկութեան արգելքին վերացումին լեռնաւեցոյ գաւառներէն Պոլսոյ ներքինուց Կայ գաղթականներուն, ինչպէս Կոնս. Բուսնոյ մէջ Կայութեան Կանգնող ի գործ գրուած Կարտաներն լեռնաւեցոյ Կովկասէն Կամոյ յիշատակականներուն: Մտնով է որ Ազգային Պատրիարքարանը իր վրայ վերցուցած էր իջեալները մասնակրարելու գործը:

<sup>29</sup> ՀԲԸՄի Պոլսոյ մասնակիցը Հիմնուած է 16 Մարտ 1910ին Անոր առաջին Գործադիր ժողովին ստեղծուած էր նորատանիներ, իսկ ստեղծողիլը՝ Տաղաւարեանը:

<sup>30</sup> Անեղմէն իջեալ Պոլսոյ երեսփոխաններ Գրիգոր Զեբրազն ու Պետրոս Կալանեանը, Մշտ երեսփոխան Գեղամ Տէր Կարապետեանը, Կարնոյ երեսփոխաններ Գարեգին Բաւարմանեանն (Արմէն Գարո) ու Լազարգէս Մերկեկեանը, Վանի երեսփոխան Վաւան Փոփոզեանը (Կոմս), Միսի երեսփոխան (Մեծն) Մուրատ Պոլսեանը:

<sup>31</sup> Նկատի ունի Պոլսոյ նուպար փաշան:

<sup>32</sup> Բագրիկ՝ զուտ Կարնոյ գիւղ Անրատայնյ արեւելքը կ'ենթադրուի որ Հիմնուած է ժ.Ա. դարու առաջին քաղաքից: Ի. Կարապետեանը ունէր ժամ 1200 Կայ թնակի: Բագրիկը է բանաստեղծ Դանիէլ Վարուճանը 10/28 Փետրուար 1900 թուակից Բագրիկէն Անդրանիկեանի ուղուած բողոքատուրդի նամակէ մը կ'իմանանք թէ ՀԲԸՄը պիտի կարողանար Կամար զրկուել է 45 սակի նպաստ մը: Նոյն նամակով անոնք սերմնացան ցարն զննելու Կամար ալլ գումարները եւս կը խնդրեն:

<sup>33</sup> Արշալոյ՝ ազգային, դրական եւ քաղաքական անկախ թերթ, Երբան մը եղած է արկանը Ազգային Անկախ Միութեան: Լաբա տեսած է Գաւիթի, երկու շրջանով 1899-1906 եւ 1908-1914 (պարբեր 1906-1907), եւ մտադիր՝ Օղիէ Թարսեան:

- <sup>27</sup> Եկատի ունի Ամենայն Հայոց կաթողիկոս Իգնիլիանը, որ 31 Հոկտեմբեր 1908ին Պոլսոյ պատրիարք ընտրուեցաւ, իսկ թաւրջ որչ՝ Ամենայն Հայոց կաթողիկոս, բայց Ս. Էջմիածին մեկնելէ առաջ միջեւ 33 Մայիս 1909 պարտաւորուեցաւ ժամ Պոլսոյ:
- <sup>28</sup> Փրանսերէն «reactionnaire» թատալիական Եկատի ունի Վերիաթեական տնտեսով ծանօթ թատղիական ախ շարժումը, որ 1900ի Մարտ 31/Ապրիլ 13ին, կը միտէր բանկէ Քարհրդարանը ու վերականգնել սուլթանական միապետութիւնը Աւելի ետք, Վկատաւարաց տնտեսով ծանօթ բանակը Ալեանիկէն հասաւ Սան Սթեփանոս եւ Մաճուաւ Եւսքիմ փաշայի ու Էնվերի առաջնորդութեամբ ժամ: Պոլսոյ, գաւազուրկ ըրաւ Ապտիս Հաժար ու վերահաստատել սահմանադրութիւնը:
- <sup>29</sup> Եկատի ունի Պոլսոյ Վերիաթեական շարժումին թաւրջ որի իսկ Ատանայի եւ ամբողջ Կիլիկիոյ մէջ տեղի ունեցան կոտորածները, որոնք կրկնուեցան աւելի ետք եւ իրենցին ժամ 30,000 կոտորու կեանքը:
- <sup>30</sup> Եկատի ունի Մուշից Եպիսկոպոս Սերոբանը Աւանդէկ, 1890-Նոյեմբար, 1961): Արժայի Գարգիսեթի առաջին սաներին 1897-1908 կը ժարէ Արարիկի առաջնորդութիւնը 1904ին կը ստանան Ատանայի առաջնորդութիւնը Օսմանեան սահմանադրութեանէն ետք Կիլիկիոյ կրթական գործին մղում տարւոյն նպատակով, Հանդանակութեան Համար կը մեկնէ Եպիսկոպոս ու իր բացակայութեան օրերուն տեղի կ'ունենայ Ատանայի Էպիսկոպոս Անթիպոլիս կը մեկնէ Եպիսկոպոսէն՝ միանալու: Համար իր համին, բայց կ'արդիւրի ցածաջ կիլիկի կը վերադառնայ Ալեքսանդրիա, աւելի ետք կ'անցնի Ամերիկա, սպայ կը ըլլի բազմաթիւ այլ ժամեր: Կարգաթող կ'ըլլայ 1922ին: Լոյս ընծայած է ժամ 35 հասար դիրք եւ գրքով:
- <sup>31</sup> Հաւանաբար Եկատի ունի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ այլ ընդդիմադիր տարրերու դէմ ցարական իշխանութիւններուն շղթարազերծած հարածները, որոնք վերջ գտան Ալճիի դատա տնտեսով ծանօթ դատաւարութեամբ որ տեղի ունեցաւ Փեթիքապուրի մէջ: Դատական ընկել Լճիի կողմէ պատրաստուած էր 40,000 կէջ բազկացած թղթերու մը: Ձերբակալուած 180 տներէն դատապարտուեցան միայն 53ը:
- <sup>32</sup> Ակնարկութիւնը կ'երթայ Գա՛կիլի ազգային առաջնորդարանի կարուաններէն Էթթաթի ազգային ժամակարութեան տնտեսով դատին, զոր տնտեսը կը հետապնդէր Անդրանիկեան որդիւն ազգային կարուանից պատասխանատու: Աւելի ետք, 1912ին ախ սպայ դատի ժամին հրատարակած է նաեւ զրքով մը՝ Էթթաթի թեղիքը Օւ Հանրային Մարտարժեք խորագրով:
- <sup>33</sup> Դեմէ՛ Պրանս արձակուրդ:
- <sup>34</sup> Մեանա՛ իտալական Սիկիլիա կղզիին հրախոս արեւելքը գտնուող քաղաք, որ Մեանա տնտեսով կը բաժնուի իտալական ցամաքամասին:
- <sup>35</sup> Եկատի ունի Գա՛կիլի ծանօթ ազգայիններէն եւ Պոլսոյ Լուսարի գրասենեակին բարձրաստիան պաշտաններէն Մարտիկ Մակարանը:
- <sup>36</sup> Հաւանաբար Եկատի ունի Գա՛կիլի ծանօթ ազգայիններէն Յովակիմ Յովակիմեանը, որ 1907-1908 զգրոցական տարելըժանին Տաղաւարեանի հետ եղած է տեղում Գա՛կիլի Ազգային Գարուանեան Վարժարանի Լուսարարութեան եւ որ Պոլսոյ Լուսարի գրասենեակին պաշտաններէն մէկն էր:
- <sup>37</sup> Եկատի ունի Զարմար Զատէեանը՝ Գա՛կիլի ԼՐԸՄի առաջին ժամանակից գանձակաւար, որ Անդրանիկեանի ժամից ազգայիններէն էր եւ կ'աշխատէր Պոլսոյ Լուսարի գրասենեակին մէջ:
- <sup>38</sup> Հաւանաբար Եկատի ունի Գա՛կիլի ծանօթ ազգայիններէն Մուրին Անէմեանը, որ 1907-1908 զգրոցական տարելըժանին Տաղաւարեանի հետ եղած է տեղում Գա՛կիլի Ազգային Գարուանեան Վարժարանի Լուսարարութեան:

SEVEN UNPUBLISHED LETTERS FROM DR. NAZARETH DAGHAVARIAN TO  
MEGERDITCH ANTRANIGIAN (1908-1909)

(Summary)

MIHRAN MINASSIAN

The seven unpublished letters covering the period between 1908 to 1909 are brought to the attention of the reader.

The author of these letters, Dr. Nazareth DagHAVarian, a founding member of the Armenian General Benevolent Union, member of the Ottoman Parliament, killed during the Armenian massacres, addressed these letters to Megerditch Antranigian, another founding member of the AGBU.

The letters shed more light on events that took place right after the Ottoman constitution was reintroduced, the circumstances, the psychology and the mentality prevailing. The letters pertain to issues concerning the early stages of the history of the AGBU, the inauguration of new branches of AGBU, the relief to be allocated to the Sebastia region and other issues of national concern.